ԹԵՄԱ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 6.8. Ուրբանացում, գործոնները և զարգացման միտումները

1. Ժամանակակից ուրբանացումը համաշխարհային երևույթ է, բարդ ու հակասական գործընթաց: Ուրբանացման վրա ազդող գործոնները բաժանվում են երկու խմբի՝ արտադրական և ոչ արտադրական: Մինչև 1950-ական թվականները ուրբանացումը պայմանավորված էր գլխավորապես արտադրական գործոններով: Արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի բուռն զարգացումը (երկրների արդյունաբերականացումը) նպաստեց ուրբանացման գործընթացին: Այնուհետև սկսեց մեծանալ ծառայությունների, այդ թվում՝ սպասարկման ոլորտի՝ գիտության, կրթության, մշակույթի, բանկային գործի, գովազդի, տեղեկատվական տեխնոլոգիաների, առևտրի դերը: Սպասարկման ամենաժամանակակից ու բարձրորակ ծառայությունների մատուցումը քաղաքային միջավայրն ավելի գրավիչ են դարձնում:

2. Քաղաքային բնակչության թիվը կրկնակի արագ է աճում, քան ամբողջ բնակչության թիվը: Զարգացած երկրներում բարձր է ուրբանացման մակարդակը (Սինգապուր, Բելգիա, Իսլանդիա, Իսրայել՝ 90%-ից բարձր), ցածր՝ տեմպերը, զարգացող երկրներում՝ ընդհակառակը: Բութանում, Նեպալում, Ռուանդայում Բուրունդիում ուրբանացման մակարդակը մինչև 10% է, սակայն բացարձակ թվով զարգացող երկրների քաղաքային բնակչությունը գերազանցում է զարգացած երկրների քաղաքային բնակչությանը (բացատրեք՝ ինչու):

3. Ինչ է դա: Խոշոր քաղաքների (մայրաքաղաքներ, նավահանգիստներ) շուրջը բնակվող բնակչությունը քաղաքային գծից ներս է բնակվում և քաղաքի բնակիչ է, բայց հող է մշակում և անասուն է պահում: Այսինքն՝ զբաղված է գյուղատնտեսական աշխատանքով և քաղաքային ապրելակերպ չունի: Խնդիրը հետևյալն է. գյուղական վայրերից դուրս մղված բնակչությունը սովորաբար բնակություն է հաստատում քաղաքների ծայրամասերում՝ առաջացնելով «աղքատության գոտիներ»: Ինչո՞ւ է այդպես:

4. Նրանց աճի հետ են կապված բազմաթիվ սոցիալական, տնտեսական, էկոլոգիական և այլ հիմնախնդիրների առաջացումն ու սրումը:

Քաղաքներում ավելի ցածր է հիվանդությունների և մահացությունների մակարդակը: Սակայն արդեն 1980-ականների կեսերից կյանքի առավելությունները զարգացող երկրների քաղաքներում սկսեցին աստիճանաբար նվազել: Ուրբանացումը, ընդհանուր առմամբ լինելով դրական գործընթաց, ներառում է մի շարք բացասական երևույթներ.

- բնական միջավայրի վատթարացումը՝ մթնոլորտի և ջրային ավազանների աղտոտվածության աճը, դրանով էլ պայմանավորված՝ համաճարակային հիվանդությունների աճը,
- կանաչ տարածությունների կրճատումը,
- սոցիալական հակասությունների սրումը, քրեածին միջավայրի տարածումը, հանցագործությունների աճը,
- քաղաքային տնտեսության բարդացումը, տրանսպորտային խցանումները, որոնք ավելացնում են նաև կառավարման դժվարությունները: